

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ



Ի՞նչ է եւ ի՞նչ Կ'ընէ

1215


Հայկ. Գրադ. Գրադ. Գրադ.
Գրադ. Գրադ. Գրադ.



Քեչիշեան Տպարան

Կ. ՊՈԼԻՍ

1913



ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՔՐԻՍՏ. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԻՆՉ Է ԵՒ ԻՆՉ Կ'ԸՆԷ

12/5

ԻՆՉ Է


Երիտասարդաց Քրիստ. Ընկերակցութիւնը ընկերութիւն մըն է Երիտասարդներու որոնք փոխադարձ բարւոքումի և բարոյական զարգացումի համար կազմակերպուած են : Թէև կազմակերպութիւնը Քրիստոնեաներու կողմէն կը կառավարուի՝ բայց բարի նկարագիրով որևէ երիտասարդ կրնայ անդամակցիլ անոր, ինչ ազգութենէ կամ կրօնական հաւատալիքէ ալ ըլլայ :




ՆՊԱՏԱԿԸ

Ընկերակցութեան նպատակն է ֆիզիքապէս, մտաւորապէս և բարոյապէս զօրաւոր մարդիկ հասցնել և օգնել անոնց որ կարենան ինքզինքնուն և ուրիշներու օգնել : Ահա այս նպատակին համար կը հայթայթուին ամէն դիւրութիւններ և զարգացումի և յառաջդիմութեան ամէն միջոցներ, որոնք մարդոց պիտի տան բարձր գաղափարականներ ըմբռնելու բաղձանքն ու պատենութիւնը :

ԱՆՁԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՍԲՊԱՅՈՒՄ

Առաջին Երիտասարդաց Քրիստ. Ընկերակցութիւնը կազմակերպուած էր Լոնտոնի մէջ Յունիս 6, 1844ին, ձորճ Ուիլեմի առաջնորդութեան տակ : Այդ շարժումը անկէ ի վեր բոլոր աշխարհի վրայ ծաւալած է : Ներկայիս Ընկերակցութիւններ կը գտնուին Եւրոպայի գրեթէ բոլոր երկիրներուն մէջ, Հիւսիսային և Հարաւային Ամերիկայի, Հընդ-





ՄԻԼՈՒՈՐԻՒ Ե. Ք. Ը.Ի ՇԷՆՔԸ ՆԻ ԻՐ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ


կատանի, Չինու, Ճափոնի և Քորէայի, Աւստրալիայի և Նոր
Զելանտայի, Պաղեստինի, Եգիպտոսի և Հարաւ. Ափրիկէի մէջ :

ՅԱՐՄԱՐԱՅՈՒՄ

Ընկերակցութիւնը մարդոց ամէն դատակարգերուն մէջ
յաջողած է : Քաղաքներու և գիւղերու մէջ ապրող մարդոց
համար կազմակերպուածներէն զատ, հաւասարապէս յաջող
արդիւնքներով Ընկերակցութիւններ հաստատուած են հան-
քագործներու, արհեստաւորներու, երկրագործներու, երկա-
թուղիի պաշտօնեաներու, զինուորներու, նաւաղներու և
կառավարական պաշտօնեաներու համար : Ուսանողական Ըն-
կերակցութիւնները ներկայացած են իբրեւ մեծագոյն բարո-
յական ուժեր Միաց. Նահանգներու, Փանաւայի, Ֆրանսա-
յի, Շուեարի, Նորվեգիայի, Չինու, Ճափոնի, Հնդկաստանի
և ուրիշ երկիրներու գոլէճներուն և համալսարաններուն մէջ :

ԸՆԿԵՐԱԿՅԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Երիտասարդներ և տղաք ընկերներ ունենալ պէտք են :
Անոնք երբ յարմար տեսալ ընկերներ և հաճոյքի աղէկ
տեղեր չգտնեն՝ իրենց պարապոյ ժամերը կ'անցնեն կասկա-
ծելի ընկերներու և ժամադրավայրներու մէջ որ անբարո-
յացուցիչ են և որ ժամանակի ընթացքին մէջ կը կործանեն
թէ՛ բարոյական և թէ՛ ֆիզիքական կեանքը : Ընկերակցու-
թիւնը բարեկամութեան և զբօսանքի այս կարեւոր պէտքը
լեցնել կը ջանայ՝ հայթայթելով ընկերային հրապուրիչ հան-
դամանքներ, Քրիստոնէական ազդեցութեանց տակ, մաքուր
և աղէկ լուսաւորուած սենեակներու մէջ, ուր երիտասարդ-
ներ հաճոյքով պիտի հաւաքուին. կը տրամադրէ նաև զըն-
դամուղ, ճատրակ, աղիւսակախաղ (տամա) եւայլն, յաճա-
խակի կը կազմակերպէ ընդունելութիւններ, նուազահան-
դէսներ և ընկերային երեկոյթներ : Ընկերակցութեան շէն-
քերը սովորաբար առտուան ժամը 9էն մինչև իրիկուան
ժամը 10.30 բաց են :



ԱՌՆԵՐԱԿԱՆ ՀԻՒՂ, ՏԻՓՐԱՅԹ



ԳԻՐԻ ՄԵՔՆԱՅ ԳՈՐԾԱԾԵԼ, ՍՈՐԿԱՂՆԵՐՈՒ ԿԱՐԳ ՄԷ

ԿՐԹԱԿԱՆ ՃԻՒՂ



Այն հարիւրաւոր երիտաւարդներուն համար, որոնք ցորենիլը դործելու ստիպուած են, Ընկերակցութիւնը դիշերային դասընթացքներ ունի, լեզուներ, տոմարակալութիւն, գիրի մեքենայ դործածել, քիմիաբանութիւն, ճարտարապետական նկարչութիւն և այլն և այլն սորվեցնելու համար։ Միշտ նոր դասընթացքներ ալ կ'աւելցուին երբ բաւականաչափ պահանջ ըլլայ։ Միայն Միաց. Նահանգներու և Վանատայի մէջ Ե. Ք. Ընկերակցութեան կրթական ձիւղին մէջ կան 67,417 ուսանողներ։

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՃԻՒՂ

Տկար մարմիններ անկարող մարդիկ յառաջ կը բերեն։ Ֆիզիքական ձիւղին նպատակն է աղուոր ֆիզիքականով մարդկութիւն ՚րը պատրաստել։ Այս գործը կը կատարուի մասնագէտ ֆիզիքական Տեսուչի մը հսկողութեան տակ։ Դասարաններու մէջ, մասնաւոր մարզանքներով, նաև խաղերով՝ ինչպէս պատիք-պոլ, վոլի-պոլ, գնդակ զլորել, լողալ, վազք, դաշտային դրօսանքներ և ըմբշական խաղեր։ Այս ձիւղին մէջ մասնող իւրաքանչիւր անգամ նախ բժշկական ուշադիր քննութեան մը կ'ենթարկուի և իրեն մարզանքներ կը յատկացուին իր ֆիզիքական պէտքին համեմատ։ Ամառուան ամիսներու ընթացքին այս ձիւղը բացօդեայ արշաւներ և դաշտագնացութիւններ կը սարքէ։ Այս կարգերուն կը հայթայթուին այն ամէն բաները որ պէտք կայ ուսումնասիրելու համար «Վնասուածին ըլլալիք առաջին օդնութիւն»ը և առողջութեան ու առողջապահութեան մասին դասախօսութիւններ կ'ըլլան։ Այս ձիւղին առանձնահնորհները վայելող 300,000է աւելի անդամներ կան։

ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԺԻՒՂ

Ամենակատարեալ կերպով յարդարուած նաւը խել պիտի չկրնար փափաքուած նաւահանգիստը հասնիլ, երբ ղեկի կազմածները կը պակսին կամ խանդարուած են։ Շատ մարդիկ ալ իրենց կեանքերուն մէջ վսեմ բարձրութեան մը հասնելու անկարող կ'ըլլան, որովհետև բարոյական չարժանիքներ և իտէալներ կա՛մ կը պակսին և կա՛մ խանդարուած են։



Ե. Ք. Բնկերակցութեան Ֆիզիսական ձիւ-
ղի գործունեութիւններէն նմոշներ:

1. Բացողեայ մարզարան:
2. Լուրդրդներու կարգ մը: Ֆիզսէրիֆիտ:
3. 100 եւրսա վազքի վերջաւորութիւնը:
4. Կամաւոր կարգի մարզիկներ:
5. Հոսթոնի (Թեքսաս) Ե. Ք. Բ.ի կարգ
մը:
6. Տղաքներու սմաւնային դաշային
պտոյտ:
7. Լոպպու համար շնակ մը, Բիլլըրայս,
Բալիֆորնիա:



**ՄԻԱՅ. ՆԱՀԱՆԳՍՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ
ՓԱՆՍԱՄԱՅԻ ԶՐԱՆՅԱԳՕՏԻՆՆ ԿՐՈՅ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԷ
Ե. Բ. Ը. Ի ՇԷՆՔ ՄԸ**

Այս կրօնական և Բարոյական Գործի ձիւղին նպատակն է բարձրագոյն չափանիշներ և կեանքի աղնիւ դադափարականներ զնել մարդոց առջեւ ու զանոնք խրախուսել որ այդ դադափարականներուն հասնին: Այս նպատակով Սբ. Դիրքի կարգեր, կեանքի վերաբերեալ խնդիրներ և մարդկային ազգի առաջնորդող անձնաւորութեանց կեանքերը ուսումնասիրելու յատուկ կարգեր կը պատրաստուին: Նաև դասախօսութիւններ և բանախօսութիւններ կ'ըլլան յաճախ կենսական կարեւորութիւն ունեցող խնդիրներու վրայ:


Այս ձիւղին առանձնաշնորհները միշտ ձրի են և անոնց մասնակցութիւնը բոլորովին կամաւոր:

ՈՋՅԱՐԱՆՈՒՄ.ՆԱԿԱՆ

Ընկերակցութիւնը Քրիստոնէական կազմակերպութիւն մըն է, բայց ոչ-յարանուանական: Անոր պաշտօնեաները կամ անդամները որեւէ անձի եկեղեցական կապակցութեան միջամուխ ըլլալու փափաք չունին: Ընկերակցութիւնը կ'ուզէ միանալ այն միւս բոլոր կազմակերպութեանց հետ, որոնք իրենց նպատակ ունին բարեօքումը երկրասարդներու և տղաքներու, և կ'առաջնորդեն զանոնք օգտակար և Քրիստոնեայ կեանք մը ասրելու:



**ՄԱՆԻԼԱՅԻ Ն. Բ. Ը.Ի ՇԷՆԲԸ, ՈՐՈՒՆ ԲԱՅՄԱՆ ՀԱՆԳԻՄԻՆ
ՄԱՍՆԱՆՈՐ ՈՒՂԵՐԶԸ ԵՑՍԵՅԱՆ Ս. ՈՒ. ՅԷԲՈՒՆԻՔՍ,
ՄԻԱՅ. ՆԱՀԱՆԳԱՅ ՆԱԽԻՆ ՓՈԽ-ՆԱԽԱԳ ԱՀԸ**



**ՏԻԹՐՈԹԻ ՄԷՋ ԵՒԵՏԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ
ԴԱՍ ԱՌՆՈՂ, ԿԱՐԳ ՄԸ**

ՈՉ-ՔՍԱԿԱՔԱԿԱՆ

Երիտասարդաց Քրիստ . Ընկերակցութիւնը քաղաքական կադմակերպութիւն մը է : Վիճաբանական և զրական ակումբները , որոնք անտեսադիտութիւն և ընկերային պայմաններ կ'ուսումնասիրեն և ժողովրդական խնդիրներու շուրջ կը վիճաբանին , կը խրախուսուին , բայց քաղաքական կամ կրօնային բնութեամբ այն ամէն նիւթերը՝ որ կուսակցական վերջաւորութեան մը հակամիտութիւն կը ցուցնեն՝ կը ջնջուին :

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՂԱՅԻՆԱՅԻՆ ԵՄԵՐԱՆԻՆԻ

Երիտ . Քրիստ . Ընկերակցութիւնը իրական եղբայրութիւն մըն է՝ հաստատուած ամէն քաղաքակիրթ երկրի մէջ : Ունի 8,584 ուրոյն Ընկերակցութիւններ , որոնց անդամակցութեան համագումարն է (1913) 1,100,530 : Այս եղբայրութեան որեւէ մէկ անդամը որ այս Ընկերակցութիւններէն որեւէ մէկը կ'այցելէ՝ սրտագին ընդունելութիւն կը գտնէ անկէ , բնակելու յարմար տեղ մը կ'առաջնորդուի (եթէ կարելի չըլլայ զինք տեղաւորել Ընկերակցութեան ննջարաններուն մէջ) և ճիշդ տեղացի անդամներուն պէս կը վայելէ առանձնաշնորհներ՝ ինչպէս լոգարան , բնութեցարան , մատենադարան , ընկերային հանգամանքներ , գործ ճարող զրասնենակներ և այլն : Իրենց հայրենիքէն մեկնող մարդոց՝ եթէ ուզեն՝ Քարտուղարներու կողմէ կը սերբուին յանձնարարագիրներ : Եւրոպա կամ Ամերիկա մեկնող երիտասարդներու կը յանձնարարուի որ այսպիսի յանձնարարական գիրքեր առնեն՝ երբ դեռ չեն մեկնած իրենց հայրենիքէն , և այդ կերպով օտար երկրի մէջ աղէկ բարեկամներ գտնելու ապահովութիւնը ունենան :

ԳՆԱՀԱՏՈՒՄԻ ԱՊԱՅՈՑՆԵՐ

Ընկերակցութեան կատարած գործնական և բանաւոր գործը բոլոր երկիրներու հանրային յարգանքին մէջ բարձր դիրք մը ապահոված է անոր : Զայն պահելու համար թէ՛



ԳՆԳԱՄՈՒԳԻ ՍԵՆՇԱԿ, ՓԱՆՍՄԱ, Ե. Դ. Ը.



ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ ՈՒՍԱՆՈՂ, ԿԱՐԳ ՄԸ

Բրիտանացիները և թէ՛ ալ ոչ-Բրիտանացիները դրամապէս օգնած են : Ճափոնի Կայսրը այս նպատակով տարեկան 5,000 եէնի նպաստ մը կու տայ : Կառավարութիւնը տարեկան 10,000 եէն կուտայ Բորէայի Ընկերակցութեան Սէուլի Կրթական դործին համար : Ռուսիոյ Կայսրը Փեթրոսպօլիի Ընկերակցութեան տարեկան 5,000 ռուպլի նպաստ մը կու տայ , նոյնչափ եւս Կառավարութիւնը : Անգլիոյ Թագաւորը և Գերմանիոյ Կայսրը , երկուքն ալ յանձնարարած են այս դործը : Ոչ միայն Միաց. Նահանգներու վերջին չորս Նախագահները սրտազին կերպով յանձնարարած են Ընկերակցութիւնը հանրութեան , այլ նաեւ Միաց. Նահանգներու Բոնիթէսը՝ երբ Փանամայի Զրանցքին պեղումին թոյլտուութիւն ըրաւ՝ Միջազգային Յանձնաժողովէն քարտուղարներ խնդրեց որ Փանամա երթան Կառավարութեան ծախքով և հոն Ընկերակցութեան ճիւղեր բանան : Կառավարութիւնը անկէ ի վեր Զրանցքին գօտին վրայ Ընկերակցութեան յատուկ չորս շէնքեր շինել տուած է : Ընկերակցութիւնը Պուէնսոս Այրէսի մէջ դործի ձեռնարկելէ ետքը , քանի մը տարիներու ընթացքին մէջ , այդ քաղաքը Ընկերակցութեան 20,000 լիրայէ աւելի դրամ տուաւ հոն Ընկերակցութեան յատուկ շէնք մը շինելու համար : Բրիտանական Կառավարութիւնը Ն. Բ. Ընկերութեան չափ մը շէնքերուն համար պէտք եղած գետինները հայթայթած է Զնդիաոտանի մեծ քաղաքներուն մէջ և յաւելուածաբար դրամական նպաստներ ալ ըրած է Կրթական և Ֆիզիքական ճիւղերու համար : Չինական կառավարութիւնը Ընկերակցութեան չափ մը կարեւոր նուէրներ ըրած է : Նախագահ Եուան Շի Բայ , նախորդ Նախագահ Սուն Շաթ Սէն , Տր. Ուիլ թինկ Փանկ և ուրիշ չափ մը պաշտօնական երեւելի անձնաւորութիւններ չափ մեծ շահագործութիւն ցուցուցած և անոր նպաստներ ըրած են : Վերջերս Հանկչաուի Կառավարիչը , որ Կոմ-փիւիլիոսի կրօնքին կը պատկանի , մինչեւ Շանհիայ քաղաքը զրկեց ներկայացուցիչ մը , պաշտօնապէս խնդրելու համար որ Ընկերակցութիւն մը կազմակերպուի իր քաղաքին մէջ ալ , և Կառավարիչը կը խոստանար պէտք եղած գետինը ինք հայթայթել :



ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՔՐԻՍՏ. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Ո Լ Ի Ս

ԱՌՃԱՄԵՆԱՅ ԿԵԴՐՈՆ

Թիւ 2, Ֆրեսո Զարկաբաժին, Փասաժ Տէ Փրքի-Շան, Բերաւ

Վ.Ս.ՐԶԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Տր. Մարտէլըս Պօէն Ա.Տենապէս

Տր. Լ. Զ. Միցցի Փոխ-Ա.Տենապէս

Տիար Ֆրէնք Ֆրերկըսըն Քարսնադար

Տիար Արչակ Դարակէօղեան Դանձապէս

Տիար Ա. Տ. Սէվասթոփոլս Զաշուեֆենիյ

Տիար Ա. Կ. Արսէն

» Արթըր Պէյքըր

» Ուոլթըր Պէրկհաուս

» Ս. Կ. Քաղանովա

» Ու. Ս. Էտմընսս

Վեր. Բապըրթ Ֆրու

Փրոֆ. Ա. Յակոբեան

Վեր. Հայնրման

Տիար Ճորճ Հընթինկիթըն

» Էրնէսթ Եէտըրման

Տր. Ա. Կ. Քաղաքոս

Տիար Վ. Յ. Մատթէոսեան

» Ու. Ու. Փիթ

» Ա. Պ. Փենեաթորէ

Վսեմ. Կ. Պ. Բալէնտալ

Տիար Րիթթըր

Տր. Սէօրինկ

Տր. Գ. Դաւիթեան

Տիար Ճորճ Զարիֆի

Տիար Տ.Ա. Տէյվիս Ընդ. Քարսնադար

» Տ. Ճ. Վան Պոմէլ Օգն. Ընդ. Քարսնադար

ՊԷՏՔԻՆ ԳՈՀԱՅՈՒՄ

Կոստանդնուպոլսոյ շատ մը բնակիչներուն փափաքին համաձայն՝ Հիւսիսային Ամերիկայի Միջազգային Յանձնաժողովը վարչական ժողով մը որոշեց և իր Քարտուղարներէն երկուքը, Տ. Ա. Տէյլիօրը և Տ. Ճ. Վան Պոմէլը, զբիւրեց այս գրութեան նախորդ մասերուն մէջ բացատրուածին նման Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերակցութիւն մը հաստատելու համար հոս :

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՇԷՆՔԻ ՄԸ ՀԱՄԱՐ ՊԷՏՔ ԵՂԱԾ ԾԱԽՍԸ ԱՊԱՀՈՎՈՒՄԱԾ

Միջազգային Յանձնաժողովը ապահոված է գումարներ Բերայի մէջ շինել տալու համար Կեդրոնական Շէնք մը, որ Ընկերակցութեան արդիական միջոցներով ու դիւրութիւններով պիտի օժտուի : Յուսալի է որ չէնքը գործածութեան համար պատրաստ պիտի կրնայ ըլլալ 1914ի աշնան :

ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ ԿԵԳՐՈՆ

Վարչական ժողովը, փափաքելով որ Ընկերակցութեան բացումին առիթով ժամանակ չանցնի՝ նախապէս իրրեւ Ամերիկեան Հիւպատոսարան գործածուած յարկաբաժինը վարձեց, այսինքն թիւ 2, Ֆրէսքօ Յարկաբաժին, փաստածէ Փըթի Շան, Բերա :

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԱԾ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՆԵՐ

Ընկերակցութիւնը իր այս առժամանակեայ կեդրոնին մէջ գտնուած ատեն՝ Կեդրոնական Շէնքին մէջ ունենալիք բոլոր գործունէութիւնները չպիտի կարենայ ունենալ : Բայց նորէն ալ կան շատ մը զրաւիչ հանգամանքներ, որոնց համար կ'արժէ որ երիտասարդներ միանան այս Ընկերակցութեան : Փողոցին և պարտէզներուն նայող գեղեցիկ ակույճի սենեակէ մը զատ կը գտնուին նաև հետեւեալ բաները .

Ընթերցարան, որուն մէջ կը գտնուին տեղական և օտար թերթեր, շաբաթաթերթեր և ամսաթերթեր և այլն :

Խաղաւարան որուն մէջ կը գտնուին գնդամուղի, ճաւրակի, աղիւսակախաղի, Տոմիսի նման խաղեր : Կը զըտնուին նաև զովացուցիչներ շատ չափաւոր գիններով :

Ընկերային սենեակներ . Հրապուրիչ վայր մը ուր կարելի է անցընել իրիկուններ և պարապոյ ժամեր և օգտուիլ : Վայր մը՝ ուր մարդ կարող է իր մէկ բարեկամին հետ տեսակցիլ և զբօսնուլ : Ընդունելութիւններ պիտի ըլլան և զանազան նիւթերու վրայ ալ դասախօսութիւններ :

Կրթական կարգեր . Արդի լեզուներ, տոմարակալութիւն, սղագրութիւն և ուրիշ գործնական առարկաներ պիտի դասաւանդուին կարելի ամէնէն աժան վճարումներով :

Բարոյական և Խրոնական գործի համար պիտի ըլլան բանախօսութիւններ, և նկարագիրը շինող ու կեանքի խընդիրներ ուսումնասիրող դասախօսութեանց շարքեր :

Պոստներ, բացօթեայ պտոյտներ և զբօսանքներ :

ԱՆԳԱՄԱՆՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԳԱՄԱՎՃԱՐ

Անդամակցութեան չափանիշը, ոչ կրօնական, ոչ ընկերային և ոչ ալ դրամական է : Այլ պարզապէս բարոյական է : Որեւէ մարդ, որ 17 և անկէ աւելի տարիք և բարի նկարագիր ունի, կրնայ անդամակցիլ՝ երբ լեցնէ անդամակցութեան տոմս մը, որ անդամներէն մէկուն կողմէ կը հաստատուի և վարչական ժողովէն կ'ընդունուի :

Ընկերակցութեան անդամները հետեւեալ կերպով կը դասաւորուին . — Գործօն, Պաշտպան և Պատուոյ անդամներ :

Գործօն անդամներ մէկ լիրա կը վճարեն իբրեւ տարեւ վճար : Այս անդամավճարը կանխիկ է և անդամին իրաւունք կու տայ վերոյիշեալ առանձնաշնորհներուն մասնակցիլ :

Ուսանողներու համար մասնաւոր կարգադրութիւն եղած է տարին 54 դահ . վճարելով անդամակցելու համար :

Պաշտպան անդամները անոնք են, որ ընկերակցութեան տրամադրած առանձնաշնորհները միջակ կարողութեամբ մարդոց ալ մատչելի ընելու համար՝ իրենց տարեկան անդամակցութեան վճարքին վրայ յաւելուածաբար երկու լիրա եւս կը վճարեն։ Անոնք ալ իրաւունք ունին այդ առանձնաշնորհներէն օգտուելու։

Պատշաճ անդամները կ'ընտրուին Վարչական ժողովին կողմէ, Ընկերակցութեան մատուցուած նշանաւոր ծառայութեան մը համար։

ՅՈՒՅՈՒԱԾ ՇԱՀԱԳԳՈՒԹԻՒՆՆԸ

Թէ Ընկերակցութիւնը բոլոր ազգութեանց ազգեցիկ ու լայնամիտ մարդոց հաւանութեան կ'արժանանայ՝ կ'ապացուցուի այն սրտազին աջակցութիւններով որոնք կ'ըլլան Թուրքերու, Յոյներու, Հայերու, Անգլիացիներու, Ամերիկացիներու, Գերմաններու, Իտալացիներու, Աւստրիացիներու և այլն կողմէ։ Մինչև 1913 Հոկտ. անդամակցութեան համար 150 դիմումներ եղած են։

ԱՅՅԵԼՈՒՆԵՐ ՍԻՐՈՎ Կ'ԸՆԳՈՒՆՈՒՆ

Իւրաքանչիւր երիտասարդ սիրով կը հրաւիրուի այցելել Ընկերակցութիւնը։

ԿՆԳՐՈՆԱԿԱՆ ՇԷՆՔԸ

Վերոյիշեալ շինուելիք կեդրոնական Շէնքին մէջ պիտի ըլլան ընդարձակ, աղէկ լուսաւորուած և օգաւորուած սենեակներ, իւր յաւելուած արդի առժամանակեայ կեդրոնավայրին, պիտի դանուին նաեւ ֆոնփերաւններու և դասախօսութեանց համար ընդարձակ սրահ մը, մարմնամարզարան, լողարան, Հեկտ-պոլ, Վոլի-պոլ, րեկիս-ֆուր, ճաշարան և այլն։

Ամէն անոնք որ համակիր են այս ձեռնարկին, որ

պիտի փափաքին անդամակցիլ կամ պիտի ուղեն աւելի տեղեկութիւններ ստանալ, սիրով կը հրաւիրուին թղթակցիլ քարտուղարներուն հետ հետեւեալ հասցէով. — Թիւ 2, Ֆրէսքօ Յարկաբաժին, Փասած տէ փըթի-Շան, Բերա :

Վ Ե Ր Ջ



Դիւան
Արեւիկ Ալպոյանեանի
Դանիք — Մաքարիա

ԳՍԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0533614

[504]

U_hL_u

135